ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. օգոստոսի 21-25-ը

Լոս Անջելես (ԱՄՆ) գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը

Վահագն Լալայան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ներդրումների ներգրավման և համակարգման վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Լոս Անջելես, 2017թ. օգոստոսի 21-25-ը

4. Հրավիրող կողմը

Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսություն

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն ամերիկյան գործարար շրջանակի ներկայացուցիչների հետ Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի առանձնահատկություններին նվիրված քննարկմանը

6. Քննարկված թեմաները

Հայաստանի ներդրումային միջավայրի առավելությունների ու կարգավորումների, առկա պետական և մասնավոր ներդրումային ծրագրերի, ազատ տնտեսական գոտիների, ինչպես նաև ներդրումային ոլորտին առնչվող այլ անհրաժեշտ տեղեկատվության ներկայացում:

7. Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը

Պատվիրակության անդամների կողմից ԱՄՆ գործարարներին են ներկայացվել ՀՀ գործարար և ներդրումային միջավայրը և «Nation of Innovation» խորագրով շնորհանդեսը:

Տեղի է ունեցել կլոր սեղան քննարկում, ինչպես նաև կայացել են հանդիպումներ համապատասխան գործարարների ու ընկերությունների, մասնավորապես՝

հանդիպումներ Հայ-Ամերիկյան գործարար խորհրդի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ի լրումն վերոնշյալ հանդիպումների՝ տեղի են ունեցել այցելություններ «Career Technologies», «QUETICO» և «AA Cater Truck» ընկերություններ և այդ ընկերությունների ղեկավարների հետ քննարկվել Հայաստանում վերջիններիս կողմից գործունեություն ծավալելու հնարավորություններն ու հեռանկարները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Այցի ընթացքում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:
- «QUETICO» լոգիստիկ ծառայություններ մատուցող ընկերության հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն ստեղծել համագործակցության շրջանակ հայկական ընկերությունների միջև,
- «AA Cater Truck» ընկերության ներկայացուցչի հետ նախանշվել են ընկերության կողմից Հայաստանում արտադրություն հիմնելու և հետագայում ԵԱՏՄ շուկա դուրս գալու հնարավորությունները,
- «Career Technologies» SS ընկերության հետ քննարկվել են նախնական փուլում Հայաստանում ընկերության արտադրանքի հետազոտության և մշակման (R&D) աշխատանքների կազմակերպման ու հետագայում արտադրության այլ փուլեր Հայաստան տեղափոխմանն առնչվող հարցեր:

9. Գործուղվողը՝
Վահագն Լալայան

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝
30.08.2017թ.